Կիրակի, Մարտ 15, 2015-ին New England-ի և մասնաորապես Բոստոնի հայ համայնքը մեծ հիացմունքով լսեց Արցախի Սենեակային Նվագախմբին (ԱՄՆ) Lexington քաղաքի National Heritage Museum-ի սրահում: ԱՄՆ-ը հրավիրված էր Ամերիկա Կալիֆորնիայի Միջազգային Մրցույթների և Փառատոների միութեան կողմից, հովանավորությամբ Արցախի Մշակույթի և Երիտասարդության Հարցերի Նախարարության եւ համագործակցութեամբ Բոստոնի Ամարաս Արվեստի Միութեան.

«Անկախության տենչն ու կարոտը եղել է Արցախի ժողովրդի դարավոր երազանքը», - ասաց Արաքս Բաղալյանը, նախագահ՝ Ամարաս Արվեստի Միութեան, «երիտասարդ եւ տոկուն՝ Արցախը հաղթահարելով անսահման խոչնդոտներ եւ դժվարություններ, ծաղկում է այսօր և ստեղծագործում արվեստի ու մշակույթի բոլորր մարզերում: Ես այնքան ուրախ եմ որ մենք կարողացանք հիւրընկալել այս համոյթը մեր համայնքից ներս: »

Մայստրо Գեւորգ Մուրադյանի գլխաւորութեամբ ԱՄՆ-ը հիմնադրվել է 2004 թւին Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության (ՀԲԸՄ) ջանքերով ու նիւթական աջակցությամբ : Տասը տարիների ընթացքում նա դարձել է մի բարձրորակ երաժշտական անսամբլ իր յուրահատուկ, ճոխ ու լայնածաւալ երաժշտական ծրագրով:

ԱՄՆ-ի Միացեալ Նահանգների այս աւագ Ճամբորդութեան ծախսերին աջակցել են ՀԲԸՄ-ը և Հայաստան Հիմնադրամի ֆոնդը, իսկ Բոստոնում մեր երաժիտներին հիւրասիրեցին Հայ Օգնութեան Միութեան Լէոլա Սասունի եւ Շուշի մասնաճիւղերը, ինչպես նաև ՀԲԸՄ-ի New England մասնաճիւղը: Աւելի քան 10 հիւրընկալ ընտանիքներ բացեցին իրենց դռները մեր հիւրերի առաջ արտացոլելով համայնքիս ջերմ վերաբերմունքը ինչպես միշտ:

Երաժիշտներին դիմավորեցին հանձնաժողովի անդամները Logan Միջազգային Օդանավակայանում և ուղեկցեցին նրանց դեպի ՀԲԸՄ տանը (Watertown) որտեղ սպասում էին նրանց հյուրընկալող ընտանիքները : Եւ ինչպես յաճախ է լինում Հայրենի մեր եղբայրների եւ քույրերի հետ, մի կարճ ժամանակամիջոցում կարծես տարիների հարազատներ լինեյին բոլորը.

Կիրակի, մարտի 15-ի համերգը հիասքանչ էր. Խմբավար Գէորգ Մուրադյանի ճկուն եւ ճարտար ղեկավարութիւնը, Բոսոնի մեր լաւագոյն դաշնակահարուհիներից Լիլիթ Կարապետյան-Շուգարյանի ելոյթը, որ կատարեց Բախի «Կոնչերտо Դաշնամուրի եւ Նվագախմբի համար in D-minor», Երեւանից սոպրանо Իրինա Զաքյանի սքանչելի ձայնը, և ԱՄՆ-ի մենակատար Լիլիթ Պետրոսյանի «Անուշ» և «Հայաստան» երգերը (վերջինս գօրծ Rhode Island բնակող կոմպոզիտոր Կոնստանդին Պետրոսյանի) խանդաւառութիւն պատճառեցին ներկաներին: Ծրագիրը բաղկացած էր մեզ ծանոթ, ինչպես նաեւ յուրահատուկ

գործերից: Վերջում կատարուեց Strauss ի «Redetzky մարտը», որտեղ խմբավար Մուրադյանը հրաւիրից ժողովրդին ծափերով միանալ նուագախմբին: Յօտնկայս ծափահարութիւններով ներկաները բարի երթ մաղթեցին խմբին:

Յետ համերգի նուագախումբը, հիւրընկալ ընտանիքները եվ նուիրատուները հիւրը եղան Բոստոնի ՀԲԸՄ եւ Ամարասի ընդունելութեան ՀԲԸՄ տանը. Երկուշաբթի երաժիշտների մի մասը զբոսանեցին Բոստոնում ներառեալ Հարվարդի Համալսարանի հրապարակը, Նահանգային Պետական տուն, Faneuil Hall Marketplace եւ Հայկական ժառանգության Զբոսայգին: Եւս մեկ ընդունելություն տեղի ունեցավ Երկուշաբթի երեկոյան հիւրընկալութեամբ Հայ Օգնութեան Միութեան : Իսկ Երեքշաբթի առավոտյան ԱՄՆ-ի խումբը մեկնեց Նիւ Եորք եվ վերադարձաւ տուն:

Յիշենք խմբավար Մուրադեանի խօսքը արտասանած բեմից «... Հային պետք է միայն խաղաղ պայմաններ... Ուստի մենք ստեղծագործում ենք Ստեփանակերտում … յանուն վեհ գաղափարի, յանուն ապագայի»: Հաւելեալ տեղեկութիւն և պատկերներ գտնելու համար այցելել www.AmarasOnline.com և ընտրել “Archived Events” from the left menu.